

**ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ
ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ**

Հարգարժան մանկավարժներ, սիրելի դպրոցականներ.

Գիտելիքը բոլոր ժամանակների կարևորագույն ձեռք բերումն է: Միայն գիտելիքներով զինված, մրցունակ կադրերն են որոշում մեր պետության վաղվա օրը, միայն գիտական մտքի ներուժով են ամուր պետության հիմքերը:

Այսօր, սեպտեմբերյան այս պայծառ արևի տակ, մենք նշում ենք գիտելիքի օրը: Շնորհավորո՛ւմ եմ ձեզ, հարգելի մանկավարժներ, գիտելիքի օրվա առթիվ: Մատաղ սերնդի մեջ գիտելիք սերմանելով, դուք հայրենասիրական մեծ գործ եք կատարում: Դուք կրթում եք մի սերունդ, որը վաղվա մեր ուսուցիչն է, բժիշկը, օդաչուն, շինարարը, զինվորը... Հենց ձեր ներդրած ջանքերն են, որ վաղը առողջ պտուղներ պիտի տան՝ ի շահ մեր փոքրիկ հանրապետության արժանապատիվ ապագայի:

Ամենաջերմ շնորհավորանքներս և մաղթանքներս ձեզ, սիրելի դպրոցականներ: Այսօր դպրոցում, վաղը բուհում, զինվորական ծառայության մեջ, մյուս ոլորտներում, կյանքից վերցրեք այն ամենը, ինչ ձեզ ուժեղ և վստահ կդարձնի:

Ջերմ շնորհավորանքի խոսքեր եմ հղում այս տարի առաջին անգամ դպրոց ոտք դնող փոքրիկներին և նրանց ծնողներին:

Թո՛ղ ուսումնառության ձեր հետագա տարիներն էլ տոն դառնան, ինչպես այս առաջին սեպտեմբերը և թո՛ղ իրականանան ապագայի ձեր հույսերն ու երազանքները:

Շնորհավո՛ր սեպտեմբերի մեկ: